ԾՆՈՒՆԴՈՎ ԹԲԻԼԻՍՑԻ

ԻՐՄԱ ՍՈԽԱՁԵ. «ԹԲԻԼԻՍՅԱՆ ԿԱՐՈՏԸ ՄԻՇՏ ՈՒՂԵԿՑԵԼ Է ՄԻՔԱՅԵԼ ԹԱՐԻՎԵՐԴԻԵՎԻՆ»

Այս տարի լրանում է Էլդար Ռյազանովի լայն ճանաչման արժանացած` «Ճակատագրի ծաղր կամ բաղնիքդ անուշ» ֆիլմի նկարահանման 40-ամյակը: Տասնամյակներ շարունակ այս ֆիլմը չկորցրեց ոչ միայն իր գրավչությունը, այլեւ, ընդհակառակը, սիրելի ու ընդունելի դարձավ հաջորդ սերունդների համար: Ֆիլմում նկարահանված ճանաչված դերասանների հիանալի խաղն էՙլ ավելի զարդարվեց այդ ֆիլմի համար հատուկ գրված երաժշտությամբ, երգերով, եւ քչերը գիտեն, որ այդ հիանալի երաժշտության հեղինակը Թբիլիսիում, հայկական ընտանիքում ծնված ու մեծացած երգահան Միքայել Թարիվերդիեւն (1931-1996) էր: Միքայել Թարիվերդիեւը ծնունդով թբիլիսցի այն հայ ստեղծագործողների թվին էր պատկանում, ում համար ողջ կյանքում Վրաստանը, առանձնապես` Թբիլիսին, մնաց ամենահարազատ, ամենանվիրական վայրը: Վերջերս Թբիլիսիում, վրաց ճանաչված էստրադային երգչուհի ԻՐՄԱ ՍՈԽԱՁԵԻ նախաձեռնությամբ Ա.Գրիբոյեդովի անվան պետական ակադեմիական ռուսական թատրոնում կարճ ժամանակահատվածում անցկացվեց ստեղծագործական երկու երեկո` նվիրված Միքայել Թարիվերդիեւին:

- Միքայել Թարիվերդիեւն իր ինքնակենսագրական` «Ես ուղղակի ապրում եմ» գիրքը սկսում է հետեւյալ տողերով. «Իմ մանկության կապույտ երկինքը թբիլիսյան երկինքն էր»: Նա Թբիլիսին հիշում էր արտակարգ սիրով ու կարոտով: «Հիշում եմ արեւելյան համեմունքների բույրով հագեցված թբիլիսյան օդը եւ Թբիլիսիի փողոցով անցնող մորս` Սաթոյին, որից, կարծես լույս էր ճառագում (մայրը միակ որդուն, Միքայելին բազիկ էր կոչում): Հիշում եմ նրա խոսքերը` ամոթ է լավ ապրելը, երբ կողքիդ կարիքավորներ են»: Ակնհայտ է, որ թբիլիսյան կարոտը Թարիվերդիեւին ուղեկցում էր ողջ կյանքի ընթացքում: Ապրում էր Թբիլիսիի Սոլոլակ թաղամասում, Ինգորողվա (Նախկին` Ձերժինսկու) փողոցի վրա: Երբեք չի մոռացել թբիլիսյան նեղ փողոցները, որտեղ շենքերի բաց պատուհաններից միշտ երաժշտություն էր հնչում: Միշտ ասում էր, որ մեծացել եմ երաժշտության ու սիրո մթնոլորտում: Սովորում էր հանրաճանաչ 43-րդ դպրոցում, այդ կրթօջախի հիմնն էլ անգամ գրեց: Դասերից հետո ընկերներով բարձրանում էին թբիլիսյան շենքերի տանիքներ, տղաներով կռվում էին, սակայն երբեք չէր մոռանում երաժշտության դասերին հաճախելը: Երբեմն դրա համար տղաները ծաղրում էին` վախկոտ, ո՞ւր ես փախչում, իսկ նա պատասխանում էր` վախկոտ չեմ, սակայն պարտադիր պետք է դասի գնամ:

Կոմպոզիտորների ծնողները` Լեւոն Թարիվերդիեւը եւ Սաթենիկ Ակոպովան

Թարիվերդիեւը արտակարգ կարոտով էր հիշում Թբիլիսիին, այն համարում ինտերնացիոնալ քաղաք: Ասում էր` գիտեի, որ հայ եմ, սակայն դա ոչ մեկին չէր հետաքրքրում, մենք բոլորս ընկերներ էինք ու սիրում էինք իրար: Տասնվեց տարեկան էր, երբ բալետի համար երկու մեղեդի գրեց, որոնք հետո ներկայացվեցին Թբիլիսիի օպերայի եւ բալետի թատրոնում:

- Իսկ ովքե՞ր էին Միքայել Թարիվերդիեւի ընկերները:

- Անմիջականորեն թաղամասի տղաները: Պլեխանովցիներից իր գրքում հիշատակում է Վոլոդյա Բուրակովսկուն (հետագայում` ճանաչված բժիշկ եւ հայտնի սրտաբան ակադեմիկոս) ու Ժենյա Պրիմակովին (նույն Եվգենի Պրիմակովին, Ռուսաստանի վարչապետ, արտաքին գործերի նախարար, ակադեմիկոսին): Բուրակովսկու մասին գրում էր, որ նա «պլեխանովսկու շպանայի» ղեկավարն էր: Թարիվերդիեւները հաճախ հանգստանում էին Պիցունդայում, ստեղծագործողների տանը, բարեկամություն անում հայտնի կոմպոզիտոր Բիձինա Կվերնաձեի հետ: Չնայած ծանրաբեռնվածությանը, երբեք չէր հրաժարվում Թբիլիսի այցելելու հրավերից: Մեկ անգամ նույնիսկ ընդհատեց Ֆրանսիայի Կաննում իր ուղեւորությունը եւ եկավ Պիցունդա:

- Նա Թբիլիսիի կոնսերվատորիայո՞ւմ էր սովորում:

- Ոչ, նա սովորում էր Թբիլիսիի կոնսերվատորիային առընթեր երաժշտական դպրոցում: Դպրոցն ավարտելուց հետո` ընդունվեց Երեւանի կոնսերվատորիա, թեպետ երկու տարի անց տեղափոխվեց Մոսկվա եւ այնտեղ ավարտեց: Հատկանշական է, որ նման ճանաչված երգահանը մանկության տարիներին երաժշտական գործիք չուներ եւ օգտվում էր հարեւանի դաշնամուրից: Ի վերջո, հարեւանը կտրուկ պահանջել էր Միքայելի ծնողներից` ձեր որդու համար դաշնամուր գնեք, արդեն հոգնեցի: Եվ գնեցին նրա համար դաշնամուր, սկսեց մեղեդիներ գրել: Շատ էր սիրում երաժշտություն գրել կինոնկարների համար: «Շատ եմ սիրում թատրոնը, սակայն երբեք չեմ փորձել իրականացնել ներկայացման ձեւակերպումը: Կինոյի համար աշխատելիս շատ ավելի ազատություն ես զգում: Համոզված եմ, որ, եթե Մոցարտը ողջ լիներ, նա էլ անպայման կինոյի համար կաշխատեր»,- գրում էր նա:

Թարիվերդիեւը Երեւանի կոնսերվատորիայում սովորելու տարիներին

- Ինչպե՞ս ձեւավորվեց Էլդար Ռյազանովի եւ Միքայել Թարիվերդիեւի գործընկերությունը: Ի՞նչ պայմաններում գրվեց «Ճակատագրի ծաղր կամ բաղնիքդ անուշ» ֆիլմի երաժշտությունը:

- Նրանք ծանոթացան Մոսկվայում, բարեկամացան: Այն ժամանակ Թարիվերդիեւը բարեկամական հարաբերություններ ուներ կոլորիտային անձնավորությունների հետ, ճանաչում էր Վլադիմիր Մայակովսկու մտերիմ ընկերուհուն` Լիլի Բրիկին, լինում էր նրա տանը, որտեղ անց էին կացվում ստեղծագործական երեկոներ: Ինչ վերաբերում է «Ճակատագրի ծաղր կամ բաղնիքդ անուշ» ֆիլմի երաժշտությանը, ապա ռեժիսոր Էլդար Ռյազանովը եւ կոմպոզիտոր Միքայել Թարիվերդիեւն անցկացրին բավականին լուրջ փորձարկում` կատակերգական, զվարճալի ֆիլմը զուգորդեցին հանրաճանաչ բանաստեղծներ Մարինա Ցվետաեւայի, Բելլա Ախմադուլինայի, Եվգենի Եվտուշենկոյի լուրջ պոեզիայով: Ռյազանովը գրում էր, որ զգուշանում էր, քանզի առկա էր հանդիսատեսի կողմից ֆիլմը չընկալելու վտանգը: Սակայն մտահղացումն իրեն չարդարացրեց, հիանալի ֆիլմ ստացվեց, հիանալի երաժշտություն գրվեց, բոլոր երգերը հատուկ այս ֆիլմի համար գրվեցին: Առաջին հայացքից բոլոր երգերը հեշտությամբ կատարվեցին, սակայն դրանցից յուրաքանչյուրի համար պահանջվեց 40-ական դուբլ: Առանձնապես ձգձգվեց Ալլա Պուգաչովայի կողմից «Мне нравится, что вы больны не мною» երգի գրանցումը: Թարիվերդիեւը միշտ դիտողություն էր անում Ալլային: Կինոնկարի նկարահանումն ավարտելուց հետո կայացած ճաշկերույթին, Ալլան մոտեցել է Թարիվերդիեւին եւ ասել. «Микаел Левонович «Мне нравится, что вы больны не мною»: Հատկանշական է, որ Պուգաչովան եւ Թարիվերդիեւն այնպես էլ չբարեկամացան:

- Իսկ Թբիլիսիի մասին երգեր չի՞ գրել:

- Ստեղծագործական մի երեկոյի ժամանակ Թարիվերդիեւն ասաց, որ շատ է ցանկանում Թբիլիսիի մասին երաժշտություն գրել եւ դրանով իսկ անակնկալ մատուցել կնոջը` Վերա Թարիվերդիեւային: Եվ, ահա, «Գարնան տասնյոթ ակնթարթ» ֆիլմի համար գրված, հեռավոր հայրենիքի նկատմամբ տածած կարոտի զգացումով լի «И прошу хоть ненадолго» երգը նվիրված է հենց Թբիլիսիին: Համաձայնվեք, որ այդ ֆիլմի համար գրված երաժշտությունը եւ բոլոր երգերը, իրոք, գլուխգործոց են:

- Թարիվերդիեւայի ազգականներից ովքե՞ր են ապրում Թբիլիսիում:

- Նրա ընտանիքի անդամներից ոչ ոք: Կինը ապրում է Մոսկվայում: Գրիբոյեդովի անվան թատրոնի ղեկավարության խնդրանքով երկու անգամ անցկացրեցին Թարիվերդիեւին նվիրված ստեղծագործական երեկո: Կնոջն էլ հրավեր ուղարկեցին, շատ ուրախացավ, որ Միքայելի երաժշտությունը այդպես սիրված է հարազատ քաղաքում:

Միքայել Թարիվերդիեւը վախճանվեց 1996 թվականին, կաթվածից, երբ հանգստանում էր Սոչիում: Չէր սիրում ետ նայել, գրում էր, որ չի կարող իմիջիայլոց ապրել: Առանձնապես սիրում էր դահուկներով սահել ջրի վրա, ընդհանրապես ջրի տարերքն ու ծովը նրա կյանքում յուրահատուկ տեղ էին գրավում: Իր ստեղծագործության մասին գրում էր, որ դրանք հագեցված են ձգտումով ու զգացումով, ապագա սերունդներն այն ավելի կգնահատեն, քանի որ անհնարին է ապրել առանց զգացումների: Որտեղից իմանար, որ հաջորդ սերունդը կլիներ շատ ավելի խիստ, չոր ու զուրկ զգայականությունից, թեպետ Թարիվերդիեւի երաժշտությունը հավերժական է, որը սպասում է իրական ունկնդրի եւ գնահատողի: Դրանք այնպես զգայական են, ինչպես ինքը կանխագուշակել էր:

ՔԵԹԵՎԱՆ ԽԱՄԻՑԱՇՎԻԼԻ



Հ.Գ. Ահա Ինգորողվա փողոցի թիվ 14 տունը, որտեղ ծնվել եւ մեծացել է հանրաճանաչ երգահանը: Անցյալ տարի շենքի ճակատի վերանորոգման ժամանակ տան պատից հանեցին հուշատախտակներ, որոնք անցնողներին տեղեկացնում էին, որ այս տանը ապրել են կոմպոզիտոր Միքայել Թարիվերդիեւն ու ակադեմիկոս Դավիթ Գամղրելիձեն: Վերանորոգումից հետո հուշատախտակները, մինչ օրս տեղադրված չեն:

«Վրաստան» թերթը այս համարն ուղարկում է Թբիլիսիի քաղաքապետարան, որպեսզի Մ.Թարիվերդիեւի ու Դ.Գամղրելիձեի հուշատախտակները վերադարձվեն իրենց նախկին տեղերը:

Ð²ðò – ä²Î²êÊ²Ü ❋ ²ÚÈ²¼²Ü ❋ ÊàðÐàôð¸Üºð

²ì²Ü¸àôÚÂ

ՓԵՏՐՎԱՐԻ 21-Ը՝ ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՕՐ

Ամեն տարվա ապրիլի 14-ին Վրաստանում նշվում է վրաց լեզվի օրը: Լսել եմ, որ այդ օրվա ընտրությունը կապված է 1977 թվականին Վրաստանի ԽՍՀ նոր սահմանադրության շուրջ ծագած իրադարձություններով: Իսկ ե՞րբ է նշվում հայոց լեզվի օրը:

Ս.Մանուկյան

Նինոծմինդա

Փետրվարի 21-ը 1999թ. նոյեմբերին ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից հռչակվել է մայրենի լեզվի միջազգային օր: Սկսած 2000թ. փետրվարից այս օրը նշում են աշխարհի բոլոր երկրներում՝ որպես Մայրենի լեզվի օր:

Հետեւաբար Հայաստանում փետրվարի 21-ը նշվում է որպես Հայոց լեզվի օր: Հայերենն աշխարհի «ամենահաջողված» լեզուներից մեկն է: Հաջողված այն առումով, որ արժանացել է աշխարհի շատ լեզվաբանների ուշադրությանն իր յուրօրինակ կառուցվածքի եւ հարստության շնորհիվ: Շատ այլազգի գիտնականներ իրենց կյանքը նվիրել են մեր հրաշալի լեզվի ուսումնասիրությանն ու մշտապես արտահայտել իրենց հիացմունքն ու զարմանքը: Իսկ Մեսրոպ Մաշտոցի մեծ գործը՝ մեր այբուբենի ստեղծումը, դարակազմիկ նշանակություն ունեցավ: Այբուբենի կատարելության առումով հայերենն իրեն հավասարը չունի ամբողջ աշխարհում: Մենք հպարտ ենք մեր մայրենի լեզվով եւ աստվածային այբուբենով:

ì²ðìºÈ²Îºðä

ԱԿԱՆՋՆԵՐԻ ՆՈՐՕՐՅԱ ԹՇՆԱՄԻՆ

Ոչ մի կերպ չեմ կարողանում որդուս սփիպել, որ ականջակալները հանի: Առավոտվանից մինչեւ ուշ երեկո անընդհատ երաժշտություն է լսում, ամեն ինչի նկատմամբ անտարբեր է դարձել, հաճախ շուրջբոլորը ոչինչ չի նկատում: Չգիտեմ, ինչպե՞ս վարվել:

Ա.Սարգսյան

Թբիլիսի

Ցավոք, այսօր հաճախ կարելի է հանդիպել երիտասարդների, որոնք ամենուր՝ փողոցում, տրանսպորտում, դասերի ժամանակ, տանը, ականջակալներ են կրում: Ուշադրություն չգրավելու համար նրանք նախընտրում են վակուումային ականջակալները, որոնք բավականին փոքր են եւ մտցվում են ականջների մեջ:

Այդպիսով ձայնն ավելի լավ է լսվում եւ կողքի աղմուկն էլ չի խանգարում: Սակայն այս սովորությունը ժամանակի ընթացքում կարող է հանգեցնել գլխապտույտների, ականջների մեջ աղմուկի, լսողության վատթարացման:

Ականջի անցքում գտնվող մկանները սահմանափակում են բարձր ձայների մուտքը ներքին ականջ: Եթե դրանք տեւական ժամանակ ազդում են ներքին ականջի վրա, մկանները թուլանում են ու այլեւս չեն կարողանում այն պաշտպանել, ինչը հանգեցնում է այն բջիջների վնասմանը, որոնք իմպուլսները հաղորդում են ուղեղին:

Ականջների համար ամենավտանգավորը բարձր հաճախականությամբ ձայներն են:

Հնարավոր բացասական հետեւանքներից խուսափելու համար պետք է վերահսկել աղմուկի մակարդակը: Թույլատրելի է ձայնի այն մակարդակը, որի ժամանակ լսելի են շուրջը գտնվող մարդկանց խոսակցությունները:

Չի կարելի երաժշտություն լսել, որի բարձրությունը գերազանցում է 60 տոկոսը եւ չի կարելի լսել 60 րոպեից ավելի:

Ավելի խելամիտ է օգտվել այնպիսի ականջակալներից, որոնք ծածկում են ականջախեցին ամբողջությամբ:

ՀԵՏԱՔՐՔԻՐ Է ԻՄԱՆԱԼ

ՔՆՈՒՄ ԵՆ, ՍԱԿԱՅՆ ՉԵՆ ՀԱՆԳՍՏԱՆՈՒՄ

Փորձագետները կարծում են, որ նրանք, ովքեր գիշերը շատ ուշ են քնում, ավելի են հակված սրտային հիվանդությունների, եթե նույնիսկ քնում են ամբողջ ութ ժամ: Հետազոտություններից պարզվել է, որ գիշերն ընդամենը հինգ ժամ քնող կանայք շատ ավելի մեծ վտանգի են ենթարկում իրենց սիրտը, քան նրանք, ովքեր քնում են ութ ժամ:

Էլիաս Խոուին (1819-1867) ասել է, որ իր կողմից կարի մեքենայի հայտնագործումը կապված է եղել մղձավանջային մի երազի հետ, որում իր վրա կարի մեքենայի ասեղների ձեւ ունեցող թրերով մարդակերներ են հարձակվել: Հազվադեպ բացառություններով, բոլոր մարդիկ էլ այս կամ այն չափով երազներ են տեսնում: Այնուամենայնիվ, շատերը չեն կարողանում գեթ մեկ երազ հիշել: Մեզնից շատերը երազ են տեսնում յուրաքանչյուր 90 րոպեի ընթացքում, իսկ ամենաերկար երազները (30-45 րոպե) լինում են լուսաբացին:

ԿԵՆՍԱԿԱՆ

«ՄԵՆՔ ԱՅՆ ԵՆՔ, ԻՆՉ ՈՒՏՈՒՄ ԵՆՔ»

Սա հին հունական ասացվածք է, որը գուցե կարելի է մեկնաբանել հետեւյալ կերպ. պետք չէ հրաժարվել որեւէ մթերքից կամ տառապել զանազան դիետաների դիմելով: Պարզապես պետք է ճիշտ սնվել:

Ամերիկացի Հերբերտ Շելտոնը գտավ մի մեթոդ, որին հետեւելով՝ կարող եք կարգավորել ձեր քաշը: Այդ մեթոդի էությունն այն է, որ անհամատեղելի մթերքներն իրար խառնելու փոխարեն, դրանք պետք է առանձին-առանձին ուտել: Նա ուտելիքները բաժանեց խմբերի: Ըստ նրա, եթե ցանկանում եք գրագետ սնվել, ուրեմն այդ դասակարգումը պետք է անգիր իմանաք այնպես, ինչպես բազմապատկման աղյուսակը եւ տարբեր խմբերի պատկանող մթերքները միասին չուտեք: Այդ խմբերն են.

Սպիտակուցներ - ընկուզեղեն, լոբեղեն, սոյա, միս, ձուկ, հավկիթ, պանիր,

Ճարպեր - սերուցք, թթվասեր, ճարպ, կարագ,

Օսլա - հացաբույսեր, կարտոֆիլ, սիսեռ, արտիճուկ,

Չափավոր օսլա պարունակող մթերքներ - ծաղկակաղամբ, ճակնդեղ, գազար,

Քաղցր մրգեր - բանան, խուրմա, չամիչ, թուզ, սեւ սալորաչիր,

Կիսաթթու մրգեր - բալ, խնձոր, դեղձ, տանձ, ծիրան, մանգո,

Թթու մրգեր եւ բանջարեղեն - նարինջ, արքայախնձոր, նուռ, թուրինջ, կիտրոն, դեղձ, խաղող, լոլիկ:

Տարբեր խմբերի պատկանող մթերքներից կարելի է միայն համադրել օսլան եւ ճարպերը, այսինքն, տապակած կարտոֆիլը կարելի է ճարպի հետ ուտել, բայց կոտլետի հետ՝ ոչ մի դեպքում: Իսկ բուտերբրոդների մասին ընդհանրապես պետք է մոռանալ, քանի որ օսլան չի համատեղվում սպիտակուցների հետ: Կան նաեւ ոչ մի խմբի հետ չհամատեղվող մթերքներ, օրինակ, դդումը: Այն կարելի է ուտել միայն հերթական սնունդն ընդունելուց երկու ժամ հետո: Այդպիսին է նաեւ կաթը, քանի որ դրա մեջ միաժամանակ ե՛ւ սպիտակուցներ, ե՛ւ ածխաջրեր կան: Ըստ այս մեթոդի երեխաներին մայրիկների կողմից պարտադրվող ապուրներն իսկական փորձություն են ստամոքսի համար: Գրագետ սնվելու համար պետք է պահպանել մի կանոն եւս. ուտելուց կես ժամ առաջ հարկավոր է մեկ բաժակ որեւէ հեղուկ խմել:

ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ՏԱՐԻՔԻ ՄՂՁԱՎԱՆՋ

Ընդունված կարծիք կա, որ անցման տարիքում պատանիներն անհամարժեք պահվածք են դրսեւորում:

Մեծերին չեն լսում, կանոններին չեն ենթարկվում, արգելքները շրջանցում են եւ անում են ամեն ինչ, որպեսզի իրենց ծնողներին խելագարության հասցնեն: Ծնողները կորցնում են իրենց հեղինակությունը եւ դրությունը փրկելու համար տենդորեն անցնում երեխային դաստիարակելու գործին, ի դեպ, այնպիսի մեթոդներով, որոնցով մի ժամանակ դաստիարակել են իրենց: Մեկ-երկու տարվա ընթացքում հաջողվում է կամակորին կոտրել, սակայն խնդիրն այն է, որ հիմնականում հենց նրանց կողմից ձեռնարկված գործողություններն են անցումային ժամանակաշրջանը դարձնում մղձավանջ: Հոգեբանները հաճախ են ասում, որ եթե ցանկանում եք մեկընդմիշտ փչացնել ձեր շան բնավորությունը, նրան մշտապես ամեն ինչ արգելեք: Մեկ-երկու ամսից ձեր «չի կարելի»-ն խիստ արգելքից կվերածվի փուչ ձայնարկության, եւ շունն այլեւս դրան չի արձագանքի: Մարդը նույնպես այդպես է կառուցված, եթե երեխային ամեն ինչ անընդհատ արգելեք, ապա ծանրակշիռ «չի կարելի»-ն իր ողջ ուժը կկորցնի: Դեռահասի առջեւ անդադար պատնեշներ շարելու կարիք չկա: Պետք է ամեն ինչ արգելելու փոխարեն, ձեր միտքը նրան հասցնելու մեկ այլ ձեւ գտնել:

ԹԵՎԱՎՈՐ ՄՏՔԵՐ

Սոսկ կյանքի բացերը, թերի կողմերն ու ցավերը նկարագրելն ու մի կողմ կանգնելը արվեստ չէ:

ՍԵՐՈ ԽԱՆԶԱԴՅԱՆ
(1915-1998)
Հայ գրող

Գիտությունը ամեն բանի համ է տալիս, աղ է ասես:

ԴԱՎԻԹ ԳՈՒՐԱՄԻՇՎԻԼԻ
(1705-1791)
Վրաց բանաստեղծ

Եթե ամուսինները երկար տարիներ սիրում են իրար, ապա սիրահարությունն անպայման դառնում է քաղցր սովորույթ, իսկ բոցավառ կիրքը վերածվում է փաղաքուշ մտերմության:

ԺԱՆ ԺԱԿ ՌՈՒՍՈ
(1712-1778)
Ֆրանսիացի փիլիսոփա

Մարդիկ հաճախ միայնակ են մնում այն պատճառով, որ կամուրջների փոխարեն պատեր են կառուցում:

Ա.ԷՅՆՇՏԵՅՆ
(1879-1955)
Գերմանացի ֆիզիկոս

Կյանքն ակնթարթ է: Այն հնարավոր չէ սկզբում սեւագրությամբ ապրել, իսկ հետո՝ մաքրագրել:

Ա.ՉԵԽՈՎ
(1860-1904)
Ռուս գրող, դրամատուրգ

Լավ միտքը, որտեղից էլ այն վերցված լինի, ավելի լավ է, քան սեփական հիմար միտքը. սա թող վիրավորանք չլինի նրանց, ովքեր ամեն ինչ փնտրում են իրենք իրենց մեջ՝ չդիմելով ոչ ոքի:

Ա.Ղազարյան
«Վրաստանի» ընթերցող

²ÜºÎ¸àÎÜºð

** Բժիշկը՝ հիվանդին.*

- Ես երկու նորություն ունեմ ձեզ համար. մեկը՝ լավ, մյուսը՝ վատ: Որի՞ց սկսեմ:

- Սկսեք լավից:

- Դե, այս վարակը մենք որոշեցինք կնքել ձեր անունով:

** Մայրը դստեր հետ այցելում է բժշկի.*

- Չգիտեմ, թե ինչ անեմ: Աղջկաս աչքերն անդադար դուրս են պրծնում, նրա դեմքին ասես ժպիտը քարացել է:

- Ես խորհուրդ կտայի աղջկա մազերի կապը մի փոքր թուլացնել...

** Հոգեբուժարանում.*

- Բժիշկ, օգնեցեք, ինձ անընդհատ թվում է, թե ես ձի եմ:

- Կօգնեմ, բայց դա շատ թանկ կարժենա:

- Փողը խնդիր չէ, ես հաղթել եմ ձիարշավարանում:

** - Մատուցող, այս ի՞նչ ճուտ եք ինձ բերել, միայն կաշին է ու ոսկորները:*

- Ներեցեք, ցավոք, փետուրները չկան, որովհետեւ տնտեսվարը դրանցից արդեն բարձ է կարել:

** Կինն արթնացնում է ամուսնուն.*

- Քեզ ի՞նչ է եղել: Ինչո՞ւ ես այդպես գոռում:

- Ես երազում տեսա, որ Սոնան խեղդվում է:

- Սոնա՞ն ով է:

- Դու նրան չես ճանաչում: Ես նրա հետ երազում եմ ծանոթացել:

** Վիրահատական սեղանին պառկած է անեղը, որին պետք է վիրահատի իր փեսան:*

- Որդիս, երբ սկսես, գլխավորը չմոռանաս, եթե կինս այրիանա, նա հաստատ կցանկանա ձեզ հետ ապրել:

ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԵՏ ԱՌՆՉՎՈՂ ՀԱՐՑԵՐՆ ԷԻՆ

Փետրվարի 5-ին Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանն ընդունեց Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության (ՀԱՊԿ) գլխավոր քարտուղար Նիկոլայ Բորդյուժային եւ ՌԴ դաշնային միգրացիոն ծառայության ղեկավար Կոնստանտին Ռոմոդանովսկուն, ովքեր Հայաստան են ժամանել մասնակցելու անօրինական միգրացիայի դեմ պայքարի հարցերով ՀԱՊԿ անդամ պետությունների իրավասու մարմինների ղեկավարների կոորդինացիոն խորհրդի նիստին:

ՀՀ նախագահը եւ ՀԱՊԿ գլխավոր քարտուղարը քննարկել են նաեւ 2014թ. դեկտեմբերին Մոսկվայում կայացած ՀԱՊԿ Հավաքական անվտանգության խորհրդի նստաշրջանում ընդունված որոշումների իրագործման ընթացքը: Հանդիպման ընթացքում Նիկոլայ Բորդյուժան Հայաստանի նախագահին զեկուցեց Կազմակերպության ընթացիկ գործունեության, համագործակցության շրջանակներում իրականացվող աշխատանքների, ՀԱՊԿ միացյալ շտաբի ընթացիկ գործունեության, Կազմակերպության կանոնադրական մարմինների առաջիկա նիստերի նախապատրաստական աշխատանքների, ինչպես նաեւ Կազմակերպության Հավաքական անվտանգության կովկասյան տարածաշրջանում անվտանգության ապահովման հետ կապված հարցերի շուրջ:

ՔՆՆԱՐԿՎԵՑԻՆ ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՕՐԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԱՐՑԵՐԸ

Ռուսաստանի Դաշնությունում կայանալիք Եվրասիական միջկառավարական խորհրդի նիստի շրջանակներում, Մոսկվայում փետրվարի 5-ին կայացավ Հայաստանի վարչապետ Հովիկ Աբրահամյանի եւ Ռուսաստանի Դաշնության վարչապետ Դմիտրի Մեդվեդեւի երկկողմ հանդիպումը:

Զրուցակիցներն անդրադարձել են տնտեսության մի շարք ոլորտներում փոխգործակցության զարգացմանը եւ այդ համատեքստում կարեւորել Եվրասիական տնտեսական միության շրջանակում տարբեր բնագավառներում համատեղ ծրագրերի եւ նոր նախագծերի իրականացումը:

Երկու երկրների կառավարությունների ղեկավարները քննարկել են նաեւ անցած տարի Սոչիում կայացած հանդիպման ժամանակ ձեռք բերված պայմանավորվածությունների կատարման ընթացքը:

ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՉՈՒՄԸ ՊԵՏՔ Է ԴԱՌՆԱ ՄԱԿ-Ի ԵՎ ՀԱՄԱՅՆ ՄԱՐԴԿՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ

Համահայկական հռչակագրի դրույթները իրավաբանական հիմք են ստեղծում աշխարհի հետ հետագա երկխոսության համար, քանի որ Հռչակագրի դրույթների համաձայն` աշխարհի տարբեր երկրներ կարող են Հայոց ցեղասպանությունն ընդունել քաղաքական մակարդակով:

Այսպիսի կարծիք հայտնեց Ազգային ժողովի ՀՀԿ խմբակցության անդամ, ԱԺ արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ Արտակ Զաքարյանը: Նրա խոսքերով, Հայոց ցեղասպանության ճանաչումը պետք է դառնա Միավորված ազգերի կազմակերպության եւ համայն մարդկության խնդիրը:

«Համահայկական հռչակագիրը հայ ժողովրդի արդար պայքարի հիմքն է եւ Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացը երբեք չի սահմանափակվի 100-րդ տարելիցով»,- հավաստեց նա:

Հանձնաժողովի նախագահը նշեց, որ Հռչակագրի դրույթները հասցեագրված են ոչ միայն միջազգային կազմակերպություններին, այլ նաեւ հիմնական հասցեատիրոջը` Թուրքիային: «Ապրիլի 24-ին զուգահեռաբար նշելով Գալիպոլիի ճակատամարտում իրենց տարած հաղթանակի օրը` Թուրքիան պարզապես փորձում է խափանել արտասահմանյան պատվիրակությունների այցը Հայաստան»,- ընդգծեց Զաքարյանը: Նրա խոսքով` դրանով Թուրքիան հերթական անգամ պատմությունը աղավաղելու փորձ է կատարում:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅԱՆ ԱՃԸ ԿԱԶՄԵԼ Է 3,9 ՏՈԿՈՍ

Հայաստանի տնտեսական ակտիվության ցուցանիշը 2014 թվականի հունվար-դեկտեմբերին 3,9 տոկոսով գերազանցել է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը:



Հայաստանի ազգային վիճակագրական ծառայության նախնական հիմնական մակրոտնտեսական ցուցանիշներով, անկում է գրանցել միայն շինարարության ոլորտը, որն անցած տարեսկզբից վերագտել էր աճի միտումը ֆինանսատնտեսական ճգնաժամի անկումից հետո, սակայն հետո կրկին սկսեց նվազում արձանագրել: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, շինարարության ծավալը նվազել է 4,3 տոկոսով: Գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալը աճել է 7,2 տոկոսով, արդյունաբերական արտադրանքի ծավալը` 2,7 տոկոսով, միջին ամսական անվանական աշխատավարձն աճել է 7,6 տոկոսով: Արտաքին ապրանքաշրջանառության ծավալները 2013թ. հունվար-դեկտեմբերի համեմատ, աճել են 1 տոկոսով (5 միլիարդ 920,9 մլն ԱՄՆ դոլար), ընդ որում` արտահանումն աճել է 2,7 տոկոսով (1 միլիարդ 519,3 մլն դոլար), իսկ ներմուծումը` 0,4 տոկոսով (4 միլիարդ 401,6 մլն դոլար):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԹԻՎԸ ՆՎԱԶԵԼ Է

Հայաստանում 2015 թվականի սկզբին մշտական բնակչության թվաքանակը կազմել է 3 մլն 10 հազար 600 մարդ, նախորդ տարվա 3 մլն 17 հազար 100-ի համեմատ: Մեկ տարում բնակչության թիվը նվազել է 6500-ով:

Այս մասին լրագրողների հետ հանդիպման ժամանակ ասաց Հայաստանի ազգային վիճակագրական ծառայության (ԱՎԾ) մարդահամարի եւ ժողովրդագրության բաժնի պետ Կարինե Կույումջյանը: Նա նշեց, որ միայն Երեւանում է նկատվել բնակչության թվաքանակի փոքր-ինչ աճ:

«Բնակչության ընդհանուր թվաքանակը նվազել է այն պարագայում, երբ գրանցվել է բնակչության բնական հավելաճ: Հայաստանում 2014 թվականին գրանցվել է 43 հազար 183 ծնունդ, որը նախորդ տարվա համեմատ ավելի է 3,3 տոկոսով: Բնական հավելաճը կազմել է 15 300 մարդ: Այսինքն, բնակչության թվաքանակի նվազումը եղել է մեխանիկական տեղաշարժ` միգրացիա: Բացի Երեւան քաղաքից, բոլոր մարզերում նկատվել է բնակչության նվազում»,- ասաց նա:

Կույումջյանը ներկայացրեց նաեւ ուղեւորների մուտքերը եւ ելքերը ՀՀ տարածք` արձանագրելով, որ 2014 թվականի հունվար-դեկտեմբեր ամիսների մուտքերը հանրապետություն կազել են 2 մլն 274 հազար 596, իսկ ելքերը` 2 մլն 776 հազար 268: «Արդյունքում, մուտքերի եւ ելքերի հաշվեկշիռը եղել է բացասական` կազմելով 41 հազար»,- ասաց ԱՎԾ ներկայացուցիչը:

ՄԵՂԱԴՐՅԱԼ ՊԵՐՄՅԱԿՈՎԻՆ ԴԱՏԵԼՈՒ ՀԱՐՑՈՒՄ` ԼԻԱԿԱՏԱՐ ՓՈԽԸՄԲՌՆՈՒՄ

Գյումրիում տեղի ունեցած սպանության հարցում հայկական եւ ռուսական կողմերը փոխըմբռնում ունեն այն հարցում, որ հանցագործի դատավարությունը պետք է լինի բաց ու թափանցիկ, իսկ նա պետք է պատժվի օրենքի ողջ խստությամբ: Այս մասին հայտարարեց Հայաստանի ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանը:

Նա ընդգծեց, որ հայկական կողմը պատշաճ համագործակցություն է հաստատել Ռուսաստանի գործընկերների հետ: «Շփումներ են եղել ամենաբարձր մակարդակով, հեռախոսազրույց են ունեցել Հայաստանի եւ Ռուսաստանի նախագահները: Եղել են շփումներ նաեւ տարբեր մակարդակներում: Եվ կարող եմ ասել, որ այս հարցում լիակատար փոխըմբռնում կա կողմերի մոտ, որ դատավարությունը պետք է լինի բաց եւ թափանցիկ, իսկ հանցագործը պետք է պատժվի օրենքի ողջ խստությամբ»,- եզրափակեց նախարարը:

Հիշեցնենք, որ Ավետիսյանների ընտանիքի 6 անդամների սպանությունը տեղի է ունեցել 2015 թվականի հունվարի 12-ին: `Նրանց մահը վրա է հասել հրազենային վնասվածքներից: Ավետիսյանների ընտանիքից ողջ էր մնացել 6 ամսական փոքրիկը` Սերյոժա Ավետիսյանը, ով կտրող-ծակող գործիքից ստացած վնասվածքներով տեղափոխվել էր բժշկական կենտրոն, վիրահատվել, բայց յոթ օր հետո մահացել: Կասկածյալին ռուս սահմանապահները հայտնաբերել են հայ-թուրքական սահմանը հատելու փորձ կատարելիս եւ հանձնել 102-րդ ռուսական բազայի հրամանատարությանը:

Վալերի Պերմյակովն ընդունել է առաջադրված մեղադրանքը:

22 ՄԻԼԻՈՆ ԵՎՐՈ` ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ

Եվրոպական միությունը Հայաստանին 25 մլն եվրո է տրամադրում գյուղատնտեսության զարգացման եւ գյուղայուն կենսամակարդակի բարձրացման նպատակով:

Եվրոպական հարեւանության գյուղատնտեսության եւ գյուղական համայնքների զարգացման ծրագրի իրականացման տեւողությունը 3 տարի է: Այդ ընթացքում 20 մլն եվրո բյուջետային աջակցություն կտրամադրվի Հայաստանի կառավարությանը` գյուղատնտեսական ու գյուղական համայնքների կայուն զարգացման համար: Միեւնույն ժամանակ 5 մլն եվրո օժանդակություն կյուլյաբերվի Հայաստանի գյուղատնտեսության նախարարությանը` Հայաստանում ֆերմերների խմբերի եւ գյուղմթերքների որակային բարելավման համար:

ԱՃՈՒՄ ԵՆ ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ԱՎԱՆԴՆԵՐԸ

Հայաստանի առեւտրային բանկերում բնակչությունից ներգրավված ավանդների մնացորդը 2014թ. նոյեմբերի վերջին կազմել է 900 մլրդ 887 մլն դրամ եւ, նախորդ ամսվա նկատմամբ, աճել 37 մլրդ 787 մլն դրամով կամ 4,4 տոկոսով:

Հայաստանի ազգային վիճակագրական ծառայության տվյալներով, նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի համեմատ, ավանդների ծավալն աճել է 140 մլրդ 17 մլն դրամով կամ 18,4 տոկոսով: Հայաստանի բանկային համակարգում հաճախորդների թիվը, 2014 թվականի հոկտեմբերի տվյալներով, կազմում է 2 մլն 207 հազար 490 անձ, իսկ նրանց հաշիվների քանակը` 3 մլն 784 հազար 373:

ՋՈՐՋ ԲԱՅՐՈՆԻ ԿԻՍԱՆԴՐԻՆ` ԵՐԵՎԱՆՈՒՄ

Երեւանում, Բայրոնի 1 հասցեում` ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿԻ գլխամասային գրասենյակի մոտ տեղի ունեցավ Եվրոպայի մեծագույն գրողներից մեկի` անգլիացի բանաստեղծ, մեծ հայագետ եւ հայ ազգի մեծ բարեկամ լորդ Ջորջ Գորդոն Բայրոնի կիսանդրու բացման հանդիսավոր արարողությունը:

Բայրոնի կիսանդրու բացման կապակցությամբ իր շնորհավորական ուղերձն էր հղել մեծ գրողի ծոռը` լորդ Ռոբին Բայրոնը: Նրա ուղերձը ներկայացվեց միջոցառման պատվավոր հյուրերից մեկի` Բրիտանական խորհրդի արվեստի ծրագրերի ղեկավար Նարեկ Թովմասյանի կողմից:

ՀԱՅ ԿՈՄՊՈԶԻՏՈՐԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ՓԱՌԱՏՈՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ

Հայ կոմպոզիտորական արվեստի 6-րդ փառատոնը` «Էդգար Հովհաննիսյան-ֆեստ»-ը հասել եզրագիծը: Փետրվարի 4-ին Ալ.Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնում անցկացվեց փառատոնի եզրափակիչ համերգը: Հայաստանի նախագահի բարձր հովանու ներքո անցկացվող փառատոնը նվիրված էր անվանի կոմպոզիտոր Էդգար Հովհաննիսյանի ծննդյան 85-ամյակին:

Փակման համերգի ընթացքում հանդես եկավ Հայաստանի պետական երիտասարդական նվագախումբը` դիրիժոր Ռուբեն Ասատրյանի ղեկավարությամբ: Հնչեցին ոչ միայն Էդգար Հովհաննիսյանի, այլեւ ժամանակակից հայ կոմպոզիտորների ստեղծագործությունները:

Հայ անվանի կոմպոզիտոր Էդգար Հովհաննիսյանի 85-ամյա հոբելյանին նվիրված փառատոնը ներկայացնում էր համերգային երեք երեկո:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ՓԵՏՐՎԱՐ

07.02.2015. *Սուրբ Իսահակ Պարթեւ Հայրապետի տոն*

09.02.2015. *Սուրբ Մարկոս եպիսկոպոսի, Պիոն քահանայի, Կյուրեղ եւ Բենիամին սարկավագների եւ սուրբ վկաներ Աբդլմսեհի, Որմզդանայի եւ Սայենի հիշատակության օր*

10.02.2015. Սրբոց Ղեւոնդյանց քահանաների հիշատակության օր

Ավանդության համաձայն՝ այդ օրը բոլոր քահանաների տոնն է: Ղեւոնդյան քահանաներն Ավարայրի ճակատամարտում սրբացած քաջորդիներն են: Ղեւոնդյանց սրբերի հիշատակը Հայ Առաքելական եկեղեցին նշում է Բուն Բարեկենդանին նախորդող երեքշաբթի օրը:

12.02.2015. Սուրբ Վարդանանց զորավարների եւ 1036 վկաների հիշատակության օր

451 թվականի մայիսին, Ավարայրի ճակատամարտում, հայրենիքի, հայ եկեղեցու եւ քրիստոնեական հավատի պահպանման համար նահատակված Վարդանանց զորավարներն ու 1036 մարտիրոսները Հայաստանյայց Առաքելական եկեղեցու մեծագույն սրբերից են: Վարդանանց տոնին Մայր Աթոռ Սբ. Էջմիածնում եւ հայկական բոլոր եկեղեցիներում մատուցվում է Սուրբ Պատարագ:

ՍԻՐՈՎ ՆՇՎԵՑ ՍՈՒՐԲ ՍԱՐԳՍԻ ՏՈՆԸ

Վիրահայոց թեմում միշտ էլ մեծ ոգեւորությամբ եւ սիրով է նշվում Սուրբ Սարգիս զորավարի, նրա Մարտիրոս որդու եւ 14 զինակիցների հիշատակության օրը: Տոնը շարժական է, այս տարի այն նշվեց հունվարի 31-ին:

Հավատարիմ մնալով ավանդույթի ուժ ստացած քայլերթին, թբիլիսահայ երիտասարդությունը հավաքվեց Թբիլիսիի Սուրբ Գեւորգ առաջնորդանիստ եկեղեցու բակում: Ուխտավորների թափորը հոգեւոր հայրերի ուղեկցությամբ, Սուրբ Սարգսի սրբապատկերով եւ խաչվառներով, ուղղվեց դեպի Խարփուխ թաղամասում գտնվող հինավուրց Սուրբ Սարգիս մատուռը:

Ուխտավորների բազմամարդ թափորը, որին միացած էին տարբեր տարիքի հավատացյալներ, մատուռի ավերակների մոտ աղոթք արեց, մոմեր վառեց եւ իր ուխտը կատարելուց հետո, շարականների երգեցողությամբ քայլերթով հասավ Հավլաբարի Սուրբ Էջմիածին եկեղեցի ու միացավ հարյուրավոր հավատացյալներին:

Արդեն մի քանի տարի է, ինչ Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Բ հայրապետի բարձր տնօրինությամբ Սուրբ Սարգիս զորավարի տոնը հռչակվել է Երիտասարդների օրհնության օր: Հավարտ երեկոյան ժամերգության կատարվեց երիտասարդների օրհնության կարգ:

Սուրբ Սարգիսը նաեւ Սիրո բարեխոսն է: Հավատարիմ մնալով ժողովրդական ավանդույթին, նախատոնակի արարողության վերջում երիտասարդները ստացան աղի բլիթներ, որի հետ կապում են իրենց փեսացուի կամ հարսնացուի երազահայտնությունը:

Վիրահայոց թեմը իր շնորհակալությունն է հայտնում Վրաստանի ներքին գործերի նախարարության ճանապարհային ոստիկանության ծառայությանը՝ Թբիլիսիում վիրահայ հավատացյալների թափորի քայլերթին ուղեկցելու եւ երթեւեկային ճանապարհով խաղաղ ընթացքը ապահովելու համար:

Վիրահայոց թեմի բոլոր եկեղեցիներում հավուր պատշաճի նշվեց Սուրբ Սարգիս զորավարի հիշատակության տոնը եւ մատուցվեց Սուրբ եւ Անմահ Պատարագ:

ՀՈՒՇ - ԵՐԵԿՈ

ԼԵԳԵՆԴԱՐ «ՊԱՐԻ ՄԻՇԱՆ» ԿԴԱՌՆԱՐ 82 ՏԱՐԵԿԱՆ...

1994 թվականի մայիսի 15-ին, Թբիլիսիի Պ.Ադամյանի անվան պետական հայկական դրամատիկական թատրոնում՝ չարագործի ձեռքով իրականացված պայթյունը, անհեթեթորեն, ընդհատեց ընդամենը 61 տարեկան Միքայել Հովսեփյանի կյանքը (1933-1994թթ.) եւ այդով՝ նաեւ նրա գեղեցիկ ու ազգանվեր գործունեությունը...

Իր ստեղծած ժողովրդական պարային խմբերով՝ Հովսեփյանը, չպարտադրված, դրանով իսկ զարմացնող նվիրվածությամբ, շուրջ 40 տարի՝ 1960-90-ականներին, Թբիլիսիում շարունակեց պարարվեստի ավանդույթների պահպանման ու տարածման գործը: Վրաստանի վաստակավոր արտիստ Մկրտիչ Ղազարյանի՝ ժողգործիքների «Սայաթ-Նովա» համույթի հետ, նրա պարախումբը հյուրախաղային համերգներով վաստակեց Վրաստանի, նրա սահմաններից դուրս՝ Հայաստանի, Ռուսաստանի տարբեր քաղաքների՝ ժողովրդական արվեստին խոնարհվող հանդիսատեսի սերն ու ճանաչումը...

Մ.Հովսեփյանի՝ հայկական դպրոցներում գործող պարային խմբերը, հաճախ, հաջողությամբ մասնակցել են Վրաստանի եւ արտասահմանյան՝ ժողովրդական երգ ու պարի փառատոներին: Նրանք մշտապես զարդարել են՝ վիրահայության շրջանում ամենասիրված, դպրոցական տաղանդներ հայտնաբերող, հանրահայտ «Գարունը գարնան մեջ» ստուդատես-համերգը, որը, ցավոք, գոյատեւեց մինչեւ 2000 թվականը:

Վիրահայ պարարվեստի երախտավորի հիշատակի մեծարմանն էր նվիրել Վիրահայոց թեմի «Հայարտուն» կրթա-մշակութային կենտրոնը՝ հունվարի 31-ի հուշ-երեկոն, որը վարում էր «Հայարտուն» կենտրոնի ղեկավար Լեւոն Չիդիլյանը:

Միքայել Հովսեփյանի հիշատակը մեծարելու համար եկել էին նրա երբեմնի գործընկերները, սաները, թբիլիսահայ մտավորականներ: Երեկոյին ներկա էին Միքայել Հովսեփյանի՝ Գայանե դուստրը, հարազատները:

Հուշ-երեկոյի իմաստավորմանը օգնեց նաեւ Վրաստանի հանրային հեռուստատեսության հայկական հաղորդումների լրագրող-խմբագիր Գոհար Մազմանյանի ձեռնարկած՝ Հովսեփյանին նվիրված տեսահոլովակը:

Երախտագիտություն եւ հասկանալի ցավ ու ափսոսանք հնչեց Հովսեփյան մարդու ու մանկավարժի՝ շրջապատում ճանաչված եւ սիրված «Պարի Միշայի» մասին, հուշեր պատմողների՝ Վիրահայոց թեմի մամլո դիվան Սուսաննա Խաչատրյանի, Վիրահայ մտավորականների միության նախագահ Ենոք Թադեւոսյանի, Թբիլիսիի Պ.Ադամյանի անվան պետհայդրամ թատրոնի տնօրեն Լուիզա Խաչատուրովայի, թատրոնի փոխտնօրեն Ռաֆայել Գրիգորյանի, բանաստեղծ, թարգմանիչ Անահիտ Բոստանջյանի, Հովսեփյանի սաներ՝ Թբիլիսիի հայկական ժողովրդական «Վանք» պարային եւ «Հայարտուն» կենտրոնի՝ թմբուկահարների խմբերի ղեկավարներ Լիանա ու Ռոբերտ Կաշավանիձեների, այլոց ելույթներում եւ դստեր՝ Գայանե Հովսեփյանի շնորհակալական խոսքում:

Երեկոյի ընթացքում «Վանք» պարախումբը կատարեց Հովսեփյանի բեմադրած «Տավիղ», «Քամանչա» ու այլ պարեր:

ՋՈՒԼԻԵՏԱ ԲԱԴԱԼՅԱՆ

«Վրաստան» թերթի խմբագրությունը խորապես վշտացած է Վրաստանի խորհրդարանի անդամ, խորհրդարանի իրավաբանական կոմիտեի փոխնախագահի, Վրաստանի եզդիների համայնքի ղեկավարներից՝

Թամազ Իսկոյի ԱՎԴԱԼՅԱՆԻ

վաղաժամ մահվան կապակցությամբ եւ ցավակցում է հանգուցյալի հարազատներին ու մերձավորներին:

ԱՎԻԱՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐ

ՇԱԲԱԹԱԿԱՆ՝ 18-ԱԿԱՆ ԹՌԻՉՔ

Վրաստանի եւ Ռուսաստանի ավիաիշխանությունները պայմանավորվել են մինչեւ 2015 թվականի փետրվարի 17-ը՝ ինչպես ռուսական, այնպես էլ վրացական ավիաընկերությունների կողմից շաբաթական 18-ական թռիչք իրականացնել Մոսկվա-Թբիլիսի-Մոսկվա ուղղությամբ. թռիչքների հաճախականության շուրջ տեխնիկական կոնսուլտացիաները դեռեւս շարունակվում են: Այդ մասին հայտնել է Վրաստանի Քաղաքացիական ավիացիայի ղեկավար Գուրամ Ջալաղոնիան:

Ավելի վաղ կողմերն ստորագրել էին 18 թռիչքի իրականացման ժամանակավոր համաձայնագիր, որն ուժի մեջ էր մինչեւ դեկտեմբերի 31-ը: Հունվարի վերջին Ռուսաստանի ավիացիոն իշխանությունները Թբիլիսիում տեխնիկական կոնսուլտացիաներ են վարել վրացի գործընկերների հետ, սակայն բանակցություններն արդյունք չեն տվել:

Ռուսաստանի եւ Վրաստանի միջեւ կանոնավոր ուղիղ ավիահաղորդակցությունը չեղյալ էր հայտարարվել 2006 թվականին երկու երկրների միջեւ հարաբերությունների սրվելուց հետո, այնուհետեւ որոշ ժամանակով վերսկսվել էր 2008 թվականին, իսկ հետո կրկին դադարեցվել օգոստոսյան իրադարձություններից եւ երկու երկրների միջեւ դիվանագիտական հարաբերությունների խզվելուց հետո:

Կանոնավոր ավիահաղորդակցությունը վերականգնելու վերաբերյալ որոշումն ընդունվել է 2014 թվականի սեպտեմբերին, իսկ արդեն հոկտեմբերի 26-ին «Աէրոֆլոտ»-ն առաջին թռիչքն է կատարել Մոսկվայից Թբիլիսի: Վրաստանի եւ Ռուսաստանի միջեւ ուղիղ հաղորդակցության վերականգնումից հետո կանոնավոր ավիաչվերթեր են իրականացնում երեք ավիաընկերություններ: Դրանցից երկուսը ռուսական են՝ «Սիբիր» եւ «Աէրոֆլոտ» ավիաընկերությունները, մեկը՝ վրացական՝ Airzena-Georgian Airways-ը:



Խ Ա Չ Բ Ա Ռ

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 3.Կողպեք կամ փականք բացել-փակելու հարմարանք: 4.Ագրեգատների եւ սարքերի ամբողջություն, որը վերափոխում է էներգիան եւ/կամ շարժման ձեւը: 8.XIII դարի հայ պատմիչ, վարդապետ Կիրակոս ...: 11.Ձեռքի հարված դեմքին: 14.Պինդ, ամուր: 15.Աստղաստանի թագուհի: 16.Ձմեռային մարզագույք: 17.Մարտիկ, զինվոր: 21.Մսակեր վայրի կենդանի: 22.Գետ եւ քաղաք Վրաստանում: 23.Կաթնամթերք: 26.Օպտիկական սարք, որը խոշորացնում է հեռվում գտնվող առարկաների պատկերը: 27.Լեռ Թբիլիսիում: 28.Նեղ ճանապարհ, կածան:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 1.XIX դարի ուկրաինացի բանաստեղծ ... Շեւչենկո: 2.Ոտքի հարված: 5.Բակի, շենքի մուտքի մեծ դուռ: 6.Մերձբալթյան պետություն: 7.Անձրեւից հետո բացվող յոթնագույն կամար: 9.Կառույց մարզական նպատակների համար: 10.Այգեգործ, այգեպան: 12.Գին, արժեք: 13.Մեկ ամբողջության պատկանող կառույցներ: 18.Սար Վրաստանի Լիխի լեռնաշղթայում: 19.Ֆրանսիացի դերասանուհի, երգչուհի եւ ֆոտոմոդել՝ Վանեսա ...: 20.Գետ Կոդորի բարձրավանդակում: 24.Քաղաք Վրաստանի Կախեթի երկրամասում: 25.Հայ Առաքելական եկեղեցու 10-րդ կաթողիկոսը՝ ... Ա Պարթեւ:

Կազմեց ԷԼԼԱ ԱԹԱԲԵԿՅԱՆԸ

ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 5.Դարակես: 9.Օդեսա: 10.Եսայի: 11.Բանավոր: 12.Աստառ: 14.Վաղես: 16.Հոգեւորական: 18.Ճղովի: 20.Մացակ: 21.Սրբիչ: 25.Գուրամ: 26.Կարգազանց: 27.Յուրովի: 28.Նահանջ: 29.Փախստական: 31.Անվախ: 32.Կարիք: 34.Կուրծք: 38.Կապան: 39.Խուզարկություն: 41.Խաժակ: 42.Սեւակ: 43.Բարեկամ: 44.Ծիրան: 45.Խորեն: 46.Տարելից:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 1.Հարատեւ: 2.Շեկոյան: 3.Ոդիսեւս: 4.Վստահ: 6.Առավոտ: 7.Ոսկան: 8.Այգեծամ: 13.Ռոճիկ: 14.Վադուց: 15.Եղելություն: 17.Զավենավան: 19.Իրավունք: 20.Մառանիկ: 22.Չանախ: 23.Զգեստ: 24.Ազդակ: 25.Գնդակ: 29.Փափուկ: 30.Նամուս: 31.Ածխածին: 33.Քարանետ: 35.Դատական: 36.Ակներեւ: 37.Թրվածին: 39.Խավար: 40.Նեղոս:

Խմբագիր՝
ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ

Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105
Գ.Աքոնելի փ. 5 Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge
E-mail: vrastan@caucasus.net

Գրանցման վկայական
№ 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

“ВРАСТАН”
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445